ԱՀՄԵԴ ԼՈՒԹՖԻ

Տարեգիր Հաֆըզ Ահմեդ Լութֆին ծնվել է Ստամբուլում 1231 (1815) թվականին, արհեստավորի ընտանիքում։ Սկզբում սովորել է թաղային դպրոցում, ապա մտել է «հենդեսե խանե», որը այն ժամանակ զինվորական դպրոց էր։ Կարճ ժամանակ հետո իր հորեղբորորդի Հյուսեին փաշայի մեդրեսեում սովորել է իրրև մենաստանավոր։ Իր ընդունակությունների շնորհիվ մեդրեսեում տիրապետում է արաբական գիտություններին և պարսկերեն լեզվին։

Ավարտելով ուսումը մեդրեսեում, 1247 (1831) թվականին սկսում է աշխատել տարբեր կրթական հաստատություններում իբրև դասատու, հետո Վիդինի և Նիշի շրջաններում ծառայում է իբրև թարգման։ Վերադառնալով Ստամբուլ, ծառայել է սադրազամության գրասենյակներում։ Այնուհետև աշխատել է «թաքվիմխանեում» (տպարան) և բժշկական դպրոցում՝ իբրև թուրքերեն լեզվի դասատու։ 1281 (1864) թվականին նշանակվել է «Թաքվիմ-ի վեքայի»-ի խմբագիր, նույն թվականին ստացել է տարեգրի (վաքաա-նյուվիս) պաշտոնը։

Ահմեդ Լութֆին ծառայել է նաև պետական բարձր պաշտոններում. եղել է պետական խորհրդի[1] անդամ, Ռումելիի կազասքեր[2] Ամեդի[3] դիվանում հարաբերական դիվանապետ և այլն։

Իր կյանքի վերջին տարիներին Ահմեդ Լութֆին Բոսֆորի իր ապարանքում զբաղվել է օսմանյան պետության պատմությունը գրելով։ Ունի նաև այլ գիտական աշխատություններ և թարգմանություններ։

Մեռել է 1325 (1907) թվականին, 93 տարեկան հասակում։

Լութֆին Օսմանյան կայսրության քսանութերորդ տարեգիրն է։ «Թարիխ-ի Լութֆի» խորագիրը կրող իր ութ հատորանոց պատմությունով և այդ գրքի ընդգրկած ժամանակի իրադարձությունների կարևորությամբ Լութֆին կարևոր տեղ է գրավում Թուրքիայի տարեգիրների շարքում։

Լութֆիի տարեգրությունը սկսվում է 1241 (1825) թվականից և շարունակվում է մինչև 1280 (1876) թվականը։ Լութֆին փաստորեն շարունակում է տարեգիր Ջևդեթ փաշայի տարեգրությունը։

«ԹԱՐԻԽ-Ի ԼՈՒԹՖԻ»

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Տարեգիրը գրքի առաջաբանում խոսում է պատմության նշանակության մասին։ Հետո խոսում է նաև օսմանյան պետության մեջ «Շահնամե» գրող հայտնի